բոխին։ Այս վտակը իր ստոգած հողերով եւ բազմաթիւ առուակներով կազմում է վերերորդ գաւառը։

7. Կոլիկից Ճորոխն ուղղւում է հիւսիս-արեւելք ճախից ընդունում է նախ Խամսալի՝ Փեռնիջուր եւ ապա Մելօ առուակները մինչեւ Օրջոխ (Որջնհաղ) 35 կիլոմետր երկարութեամբ, որը կոչւում է Խալխալի վիճակը կամ գաւառը։ Այս գաւառը իր առուակների աւազանով կազմում է Ճորոխի հօթներորդ գաւառամասը։

8. Պալխար վտակը ընդունելուց յետոյ Ճորոխը ուղղւում է դէպի արեւելք 10 կիլոմետր երկարութեամբ մինչեւ Լիվանա եւ Կոլիկ գեղերը եւ ընդունում է աջից Թորդումի եւ Օլթիի միացեալ վտակները։ Թորդում վտակը սկսւում է Դումլու եւ Կուշ-կուշլար լ-ից, հարաւից հիւսիս ուղղւում է, անցնում է Թորդում լճով, թափւում է Թեւի ջրանցքը եւ 105 կիլոմետր ճանապարհ կարելով եւ բազմաթիւ առուակներ ընդունելով՝ հասնում է Ճորոխին։ Թորդում վտակն իր ընդարձակ աւազանով կազմում է ութերորդ գաւառը Ճորոխի Աւազանի։

9. Օլթի վտակն սկսւում է Կանդիլ (Ոսկեանց) լեռներից, ուղղւում է դէպի հիւսիս ընդունելով բազմաթիւ առուակներ։ Ինչպէս Թորդում վտակը, նոյնպէս Օլթի վտակը իրենց ակունքում ունին բազմաթիւ լճակներ, իրենց ընդարձակ մարգաստաններ-